Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 15/3-09/17 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 12 ապրիլի 2017թ. ժ. 16:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Հարությունյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Գ. Եսայանը |
| | Պ. Բոշնաղյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 15/3-09/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակիցների զբաղված տեղերի և մասնակիցներից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 15/3-09/17 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.

ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/3-09/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է մերկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Մ-Բի-Ռ» ՍՊԸ– (հասցեն՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4),

1.2. «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Մ-Բի-Ռ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, այդ թվում հավելված 4.1:

1.4. Ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների համար «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 17 666 410(տասնյոթ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2.

Հրավեր ներկայացրած մասնակցների գրաված տեղերի և մասնակցներից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

Հանձնաժողովը ելնելով «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերից,

Որոշեց՝

2.1. «Մ-Բի-Ռ» ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար:

2.3. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում մասնակիցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թ-ի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմանը կից հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի վարվելու է բանակցություններ: Բանակցությունները տեղի կունենան 2017 թ-ի ապրիլի 18-ին ժամը 15:00-ին ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

Հարց 3. ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 15/3-09/17 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

2017 թ-ի ապրիլի 18-ի բանակցությունների արդյունքից ելնելով հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Հ. Հարությունյան

Անդամներ՝ Գ. Եսայան

Պ. Բոշնաղյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան